

Հ. ԱՆԱՅԱԿ

ՀԱՅ-ՀՈՒՆԱԿԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԻ ԷՋ  
ԿԱՆԴԻԱՅԻ ՊԱՏԵՐԱԶԱԻ ՇՐՋԱՆԻՑ (XVII դար)

Նոր աղբյուրների հիման վրա մեզ հաջողվել է երևան բերել արևմտահայ ազատագրական շարժումների պատմության մեջ մինչև այժմ անծանոթ էջեր, որոնք վերաբերում են XVII դարին: Ըստ այդ նյութերի՝ Կանդիայի պատերազմի ընթացքում արևմտահայերի մոտ սկսվել է թյուրքական դաժան տիրապետության դեմ ազատագրական շարժում՝ հուլյն-հայկական միացյալ ապստամբության ծրագրով, մի շարժում, որն արտահայտում է թյուրքական լծի տակ տառապող երկու ժողովուրդների համերաշխությունն՝ ընդդեմ օտարերկրյա նվաճողների, ի բացասումն նվաճողների այն քաղաքականության, որը ձգտում էր իրարու հակադրել հայ ու հուլյն ժողովուրդներին, հօգուտ իրենց տիրապետության ամրապնդման: Հայ ժողովուրդը, որ երկու դար առաջ<sup>1</sup> Պոլսի, հունական քաղաքակրթության այդ հոյակապ ոստանի, անկման և ավերման առթիվ եղբայրական անկեղծ համերաշխությամբ էր բաժանել հուլյն ժողովրդի ծանր վիշտը<sup>2</sup>, XVII դարում արդեն համատեղ պայքարի համար ձեռք էր մեկնում հուլյներին, որպեսզի միասնական ճիգերով թոթափեն սուլթանական լուծը:

Այդ շարժումն արևմտյան պետությունների կողմից թմբկահարվող խաչակրական շարժումների վրա հույսեր էր դնում, բայց, ինչպես պարզվում է մի շարք փաստաթղթերից, միաժամանակ ռուսաց ցարի և վրաց թագավորի մասնակցությունն անհրաժեշտ էր համարում ազատագրության այդ գործում, մանավանդ ռուսաց ցարի, որովհետև ռուսական պետությունը XVII դարի կեսերին հանդիսանում էր եվրոպական ուժեղ պետություններից մեկը և խոշոր դեր էր խաղում արևելյան եվրոպայի քաղաքական կյանքում<sup>3</sup>:

Մեր մի աշխատության մեջ խոսել ենք այն մասին, թե հայ ժողովուրդն ինչպիսի՞ ծանր պայմաններում էր գտնվում օսմանյան սուլթանների բռնակալ իշխանության տակ, ենթակա լինելով տնտեսական ու բարոյական անօրինակ ճնշումների<sup>4</sup>: Հայ ժողովրդի, ինչպես թյուրքական տիրապետության տակ ճնշվող մյուս ժողովուրդների, ազատագրական տրամադրություններից ու ձրգտումներից փորձում էին օգտվել արևմտա-եվրոպական պետությունները և դրանք ծառայեցնել իրենց տնտեսական ու քաղաքական նպատակներին, խոստանալով՝ օժանդակել այդ ժողովուրդներին խաչակրական արշավանքների միջոցով:

<sup>1</sup> Այս մասին տես մեր «Армянские хронисты о падении Константинополя» հոդվածը, հետևյալ հրատարակության մեջ. «Византийский Временник», т. VII (Москва, 1953), стр. 444—466.

<sup>2</sup> «История дипломатии», т. I, под ред. В. П. Потемкина (Москва, Гос. соц.-эк. изд., 1941), стр. 227—231.

<sup>3</sup> Հ. Անայակ, Թյուրքական տիրապետությունը Հայաստանում XVII դարում «Տեղեկագիր» Հայկական ՍՍՌ Դիտությունների ակադեմիայի, հասարակական գիտություններ, 1951, № 5, էջ 51—70:

Այս շրջանի խաչակրական շարժումները բացառապես ծառայում էին ֆրանսիական էքսպանսիայի տարածմանն Արևելքում և պապական ազդեցության ընդարձակմանը:

Ինչպես հայտնի է՝ սկզբում արևմտա-եվրոպական առևտրական կապիտալի միակ ու տիրական ներկայացուցիչը Մերձավոր-Արևելքում Ֆրանսիան էր, որի առևտրական իրավունքները հենվում էին 1535 և 1581 թվականների կապիտուլացիաների վրա և որի դրոշի տակ միայն իրավունք ունեին Արևելքի նավահանգիստները մտնելու՝ մի շարք եվրոպական ազգությունների պատկանող վաճառականները: Բայց, Անգլիան իր հերթին 1593 թվականին ստանալով իր առաջին կապիտուլացիաները՝ իր առևտրի համար ձեռք էր բերել նույն արտոնությունները, ինչ որ Ֆրանսիան ուներ: Դրանից հետո հրապարակ էր եկել և Հոլանդիան՝ 1598 թ. ձեռք բերելով իր առաջին արտոնությունները, իսկ 1612 թ. կապիտուլացիաներով ձեռք բերելով նաև այն նույն և հավասար իրավունքները, որ ունեին Ֆրանսիան և Անգլիան:

Ֆրանսիան, որի արևելյան առևտուրն այսպիսով տուժել ու նվազել էր XVII դարի սկզբին, պայքար էր սկսել մրցակից Անգլիայի և Հոլանդիայի դեմ: Ֆրանսիայի այդ պայքարին լծվել էր և Հռոմեական եկեղեցին, որի շահերը, Ռեֆորմացիայի դեմ մղած իր պայքարում, նույնպես պահանջում էին անգլիական և հոլանդական ազդեցությունների վտարումն Արևելքից:

XVII դարի սկզբից Հռոմի պապերի կողմից վերարծարժվող խաչակրական շարժումների նպատակն էր զենքով գրավել Մերձավոր-Արևելքը: Պապերը, օգտագործելով այն կեղծիքը, թե իրենց նպատակն է «արևելյան քրիստոնյաների շահերի» պաշտպանությունը, գովաբանում էին ֆրանսիական զենքը, որպեսզի Արևելքի քրիստոնյա ժողովուրդներին ևս ներգրավեն պապականության և ֆրանսիական կապիտալի տարածման համար ձեռնարկվող արշավանքներին: Այսպես, օրինակ, Ուրբան VIII պապը, 1630 թ. ֆրանսիացի միսիոնարներ ուղարկելով Սիրիա, Լիբանան, Պաղեստին և Եգիպտոս, տեղական ժողովուրդների հոգևոր ղեկավարներին գրած իր նամակներում փառաբանում էր Ֆրանսիան, «որտեղից [մի ժամանակ] դուրս է եկել լեգեոնների զինված բարեպաշտությունը, ամենաքրիստոնյա թագավորներին առաջնորդելով Սիրիա գերիների շղթաները սրով խորտակելու, և Երուսաղեմի պարիսպները նորոգելով» և «որտեղից մեկից ավելի անգամներ երջանկությունն ու հաղթանակը նավարկել են դեպի գերի Արևելքը, ամենաքրիստոնյա նավատորմի հետ»<sup>1</sup>:

Այսպիսի ագիտացիա էր մղվում ամբողջ Արևելքում:

Նույն իմաստով գրգիռ էր տրվում և հայերին:

Բնատիեյյան կրոնավոր Կլեմենտ Գալանոսը, որ Հռոմի Պրոպագանդայի (Propaganda Fide) քարոզիչն էր հայերի մեջ, կոչ էր անում նրանց՝ միանալ Հռոմեական եկեղեցուն և հռոմեացիների կամ ֆրանկների ձեռքով ազատություն ձեռք բերել:

«Ո՞վ աշխարհ Հայաստանեաց,—գոչում էր նա սրտագին,—որքա՞ն երանելի յառաջն էիր, որքա՞ն հզօրագոյն տէրութեամբ և փառաւորագոյն վայել-

<sup>1</sup> P. Rocco da Cesinale, Storia delle Missioni dei Cappuccini, t. III, (Roma, Tip. Barbera, 1873), p. 214—215.

Ֆրանսիայի թագավորները կրում էին «Ամենաքրիստոնյա Վեհափառություն» (Majeste Très—Chretienne) տիտղոսը և «ամենաքրիստոնյա նավատորմ» նշանակում էր «ֆրանսիական նավատորմ»:

շուրթեամբ վարդարէիր, յորժամ զարդն քո և զպայծառութիւն և զիշխանութիւն ի Պետրոսի սուրբ աթոռոյն ընկալայիր: Աւա՛զ, եզո՛ւկ, զիա՛րդ իշխանդ գաւառաց եղեր ընդ հարկիւ, զիա՛րդ ոսկին քո փոփոխեցաւ յերկաթ, զիա՛րդ ամենայն բարեզարդութիւնքն քո ոչինչ եղեն: ...Այլ աղերսանք և ժտութիւնն իմ առ ձեզ է միայն վասն ձերոյ հոգևոր և մարմնաւոր օգնութեան, որպէս զի ի ձեռն միաբանութեանդ փրկեսցիք ոչ միայն հոգևով ի տէրութենէ սատանայի, այլ և մարմնով ի յուծոյ անհաւատից. և զի որպէս կատարեցան այլ բանքն գուշակութեան մեծին ձեր Ներսէսի, նույնպէս և կատարեսցի վերջինն, որ ասէր, թէ՛ Յետ այսորիկ փրկութիւն ամենայն աշխարհաց և քրիստոնէից ի յարիական աղղէն Հռովմայեցոց եղիցի, որք են Ֆռանկք: ...Ուրեմն զալոց են Հռովմայեցիքն փրկել զաշխարհն և զազգն ձեր» և այլն<sup>1</sup>:

Պապերի և Արևելքում գործող լատին միսիոնարներին այս ուժեղ ու ճարպիկ ագիտացիան իրոք որ կարողանում էր որոշ շափով ազդել արևելյան քրիստոնյա ճնշված ժողովուրդների ազատագրական շարժումների վրա, մասնավանդ Կանդիայի սլատերազմի շրջանում, երբ կարծվում էր, թե անխուսափելի էր թյուրքական բռնակալ իշխանության պարտութունն ու տապալումը:

Կրետեի կամ Կանգիայի պատերազմի XVII դարի քաղաքական խոշորագույն իրադարձությունն էր, որը միջազգային նշանակություն ուներ:

Սկսած 1645 թվականից՝ այս պատերազմն ամբողջ քսանհինգ տարի մինչև 1669 թվականը, իր վրա բեռեց քաղաքական աշխարհի ուշադրությունը: Պատերազմը մղվում էր Օսմանյան Կայսրության և Վենետիկյան Ռեսպուբլիկայի միջև՝ Կրետեի տիրապետության համար:

Այս պատերազմով որոշվում էր Օսմանյան Կայսրության գերիշխանության հարցը Միջերկրական ծովում: Դրա համար էլ այս կամ այն շափով այդ պատերազմով շահագրգռված էին եվրոպական գրեթե բոլոր պետությունները:

Հարկ է առանձնապես նշել պապական արքունիքի ինչպես ուղղակի օգնությունը, այնպես և դիվանագիտական միջամտությունը հօգուտ Վենետիկյան Ռեսպուբլիկայի: Այս միջոցով նա աշխատում էր հռոմեականության շահերն ապահովել Արևելքում:

Այդպիսի ակտիվ դերով հանդես եկավ պատերազմի հենց սկզբից Իննուկենտ X-ը, որի նման վարվեց և նրա հաջորդը՝ Ալեքսանդր VII-ը: Վերջինս, ի միջի այլոց, 1666 թվականի դեկտեմբերին մի կոշ ուղղեց կաթոլիկ թագավորներին, որոնց թվում նաև Լուդովիկ XIV-ին:

Կանգիայի պատերազմի սկզբին ֆրանսիացիներն սկսել էին օժանդակություն ցույց տալ վենետիկցիներին, նույնիսկ զինվորական քողարկված օգնություն ուղարկել: Այդ պատերազմում Ֆրանսիան հանդես էր գալիս որպես շահագրգռված պետություն: Լուդովիկ XIV-ն ու նրա մինիստր Մազարինին (մեռ. 1661 թ.) ծրագրեր էին մշակում Օսմանյան Կայսրության ուժեղացող թափը կոտրելու համար և այդ ծրագրերի խնդիրներից մեկն էր՝ գրավել Ոգեսկան արշիպելագի կղզիները և փակել Միջերկրականը թյուրքերի առաջ՝:

Մենք շենք խոսում մյուս պետությունների մասին, որոնք նույնպես, Արևելքի նկատմամբ իրենց շահերից ելնելով, հետաքրքրվում չին Կանգիայի

<sup>1</sup> «Միաբանութիւն Հայոց սուրբ եղեղեցւոյն ընդ մեծ սուրբ Եղեղեցւոյն Հռովմայ, շարադրեալ ի յերկուս հատորս, ի պատմական և ի վիճաբանական, ի կարգէ Թէառնոսաց Կղէմէս վարդապետէ՞՞, հատոր Բ, մասն Բ (Հոռմ, 1661), էջ 363—369:

<sup>2</sup> *Revue d'Histoire Diplomatique*, XVII-e année, 1903, p. 365.

պատերազմով, ինչպես՝ Սպանիան, իտալական պետությունները, գերմանական մի քանի իշխանապետություններ և այլն:

Արևելքում գործող լատին միսիոնարները մեծ եռանդով ադիտացիա էին անում արևելյան քրիստոնեության մեջ՝ ազատագրման հույսեր տալով այդ ժողովուրդներին և, օգտվելով նրանց դժգոհ տրամադրություններից, Օսմանյան կայսրության մեջ ներքին խլրտումներ ու ապստամբական շարժումներ էին առաջացնում հօգուտ Կանդիայի և խաչակրության:

Ալեքսանդր VII պապի և Լուդովիկ XIV թագավորի դործակալները կարողացել էին 60-ական թվականներին սերտ կապեր հաստատել Սիրիայում՝ երեք եկեղեցիների ղեկավարների հետ. դրանք էին՝ Անտիոքի հունաց պատրիարք Մակարը, Կիլիկիայի հայոց կաթողիկոս Խաչատուր Գաղատացին և Հալեպի ասորի հակոբիկյանների կաթողիկոս Անդրեասը: Վերջիններս, որպես իրենց ժողովուրդների վերնախավերի հոգևորական ներկայացուցիչներ, այդ վերնախավերի միջոցով էլ արդեն շփման մեջ էին արևմտա-եվրոպական պետությունների հետ: Նրանք գաղտնի դիմումներ էին ուղարկում Ալեքսանդր VII պապին<sup>1</sup> և Լուդովիկ XIV թագավորին, դիմումներ, որոնց մեջ, նկարագրելով իրենց ժողովուրդների անտանելի դրությունը, հույս էին հայտնում, որ շուտով կգտնեն իրենց ազատությունը Լուդովիկի օգնությամբ<sup>2</sup>:

Այս փաստերը խոսում են այն մասին, թե ինչպես Եվրոպան աշխատում էր օգտագործել արևելյան քրիստոնյաներին՝ սուլթանական Թյուրքիայի դեմ, նույնպես և արևելյան քրիստոնյա ժողովուրդների վերնախավերն աշխատում էին օգտագործել Եվրոպայի ուժը՝ առաջնորդվելով, իհարկե, առաջին հերթին իրենց տնտեսական շահերից: Այդ պատճառով էլ նրանք բացասաբար չէին վերաբերվում խաչակրական նոր արշավանքների կազմակերպման մասին Եվրոպայից Արևելք հասնող պրոպագանդային, հատկապես այս ժամանակ, երբ մի կողմից կայսրը Հունգարիայում, իսկ մյուս կողմից Վենետիկն ու նրա դաշնակիցները Միջերկրականում կռվի մեջ էին թյուրքերի հետ:

Քաղաքական այսպիսի մթնոլորտում էր, որ Օսմանյան կայսրության մեջ ապրող հայ և հույն ազգաբնակչության վերնախավերն սկսում են քայլեր առնել՝ իրենց ազատագրության հարցը դործնական հողի վրա դնելու համար:

Շարժումն արդեն փաստ էր 1666 թվականին:

Հայր Դոմինիկ Օտտոմանի կենսագիր Հ. Բուլդարինին ավանդում է, որ այս թվականին մի հայ ազնվական (gentil' huomo armeno) հայ-հունական միացյալ ապստամբության ծրագրով որպես պատվիրակ հասել էր Փարիզ, Հայր Օտտոմանին հրավիրելու, որպեսզի նա Արևելքի դժգոհ ժողովուրդների գլուխն անցնի Մահոմետ IV-ի բանակների դեմ կռվելու համար:

«Այս միջոցներին, — գրում է նա, — Փարիզում մի հայ ազնվական, որը հանձարեղ և մեծ հաստատակամության տեր մարդ էր, եկավ Հայր Օտտոմանի մոտ՝ նրան խրախուսելու համար Արևելյան կայսրությունը վերականգնելու

<sup>1</sup> P. Rocco da Cesinale, Storia delle Missioni dei Cappuccini, t. III, p. 200.

<sup>2</sup> Միսիոնարների և ֆրանսիական հյուպատոսի հետ հիշյալ պատրիարքների հարաբերությունների մասին՝ «Briève relation de la Mission d'Alep en 1662, adressée d'Alep aux âmes devotes, par les superieurs des Missions des RR. PP. Capucins, Carmes et Jesuites», հետևյալ ժողովածուի մեջ. «Documents inédits pour servir à l'histoire du christianisme en Orient (XVI—XIX siècles)», publiés par le Père Antoine Rabbath, t. I (Paris, A. Picard, 1907), p. 450—468.

զործում, հանձնարարական նամակներով, որոնք գրված էին Ալեքսանդրիայի հունական պատրիարքի և նրա ընդհանուր տեղապահ Կոզմա Մավրիկ Պալեո-լոգի կողմից, որն Արևելքի քրիստոնյա վերջին կայսրների արքայական տր-յունից էր: Նա անկարելի չէր համարում այդ բանի հաջողությունը, եթե նրա-նում օգնեին լատինական զինված ուժերը, հունաժես պատրիարքների և եպիս-կոպոսների անունից նրան վստահեցնելով, որ Հունաստանի նահանգները և Հայաստանի մեծագույն մասը\*, որոնք առավելապես քրիստոնյա բնակչու-թյուն ունեն և թյուրքական փոքրամիջ զորքով են պահված, կթոթափեն օս-մանյան լուծը և թագավոր կհռչակեն նրան: Նա հայտնում էր, որ Ալեքսանդրիա-յի պատրիարքի դիտումն էր, եթե կարողանար համաձայնության գալ հունա-ժես մյուս եպիսկոպոսների հետ, շարժման մեջ դնել մոսկովցիներին, վալախ-ներին, եթովպացիներին, [այսինքն] մի ամբողջ կիսաշխարհ, Օսմանյան Կայս-րության զանազան կողմերից ներխուժելու համար»<sup>1</sup>:

Քիչ հետո այս խնդրով անձամբ Փարիզ էր մեկնել նաև հիշյալ պատրիար-քական տեղապահ ինքը:

Ուրեմն Օսմանյան Կայսրության մեջ XVII դարի 60-ական թվականնե-րին, երբ Կանդիայի պատերազմի առթիվ նոր խաչակրության արիք էր բարձ-րացել, հույն-հայկական միացյալ ապստամբության ծրագիր էր ստեղծվել և ապստամբական այդ ծրագրին կյանք տալու համար պատվիրակություն էր ուղարկվել Նվրոպա, օգտվելու համար ժամանակի քաղաքական հանգամանք-ներից:

Վերոհիշյալ Հայր Օտտոմանը (Padre Ottomano) ծագումով թյուրք դոմի-նիկյան կրոնավոր էր, որը Սուլթան Իբրահիմի որդին և Սուլթան Մահմեդ IV-ի եղբայրն էր համարվում կամ իբրև այդպիսին էր ներկայացվում քաղա-քական աշխարհին՝ Օսմանյան Կայսրության թշնամի եվրոպական պետություն-ների կողմից: Նրա ծագման ու անձնավորության մասին շատ են խոսել ժա-մանակակիցները<sup>2</sup>:

\* «Հայաստանի մեծագույն մասը» արևմտյան (թյուրքական) Հայաստանն է ամբող-ջությամբ: Որ պետք է այսպես հասկանալ՝ երևում է և վերոհիշյալ հայ պատվիրակի հե-տադաշու արտասանած մի ճառից, ըստ որի ծրագրված ապստամբությունն ընդգրկում էր Վանը, էրզրումը, Բիթլիսը, Սեբաստիան և Թոխաթը, տես՝ «Quelques discours et let-tres adresses a Louis le Grand, Roy de France, sur l'etat et les affaires de l'Empire des Turcs; publies par le Sieur Georges Bonnet» (Paris, chez Claude Barbin, 1683), p. 18.

<sup>1</sup> P. O. Bulgarini, «Vita del Padre maestro F. Domenico di S. Tommaso dell' Or- dine de Predicatori, detto prima Sultan Osman Ottomano, figlio d'Ibraim, Imperatore de Turchi» (Napoli, presso Giuseppe Roselli, 1689), p. 285.

<sup>2</sup> Բացի չ. Բուլգարինիի գրած կենսագրությունից, որ հիշատակեցինք վերևում, Հայր Օտտոմանի մասին կան նաև, ի միջի այլոց, հետևյալ աշխատությունները.

ա) «L'Histoire du Prince Osman, fils du Sultan Ibrahim, Empereur des Turcs, et frere de Mahomet IV. a present regnant, depuis nomme le P. Dominique—Othoman, de l'Ordre des Freres Pescheurs» etc... (A Paris, chez Estienne Loyson, 1670).

Հեղինակն է Chevalier de Jant-ը: Սրա առաջին տպագրությունը եղել է 1665 թ.:

բ) «Vie du P. Dominique de St. Thomas, fils d'Ibrahim, empereur des Turcs, par le P. Jacques Bullet, dominicain, gd. penitencier a Naples, ne a Besançon dans le XVII-e siècle» (Besançon, 1719).

գ) «Histoire des trois derniers empereurs des Turcs, depuis 1623 jusqu'a 1677; traduite de l'Anglois de Ricault», t. II (Paris, chez la Veuve Louis Billaine, 1682), p. 61: «Histoire du Père Ottoman et origine de la guerre de Candie».

Հայր Օտտոմանը, որը 1645 թվականին 6 ամսական հասակում գերի էր բռնկել Մալտայի ասպետների ձեռքը, իր դաստիարակությունն ու կրթությունը ստացել էր Մալտայի վանքերից մեկում, 1660—1664 թվականներին Հոտմոսմեղել էր փիլիսոփայության ուսանող և այդ ժամանակ էլ սկսվել էր նրա համար հորիզոն բացվել քաղաքական ասպարեզում: Այնտեղից կարգինալ Անտոն Բարբերինին, որը ֆրանսիական կուսակցության ներկայացուցիչն էր պապական արքունիքում, Սազարինին իրազեկ էր դարձրել կրոնավոր եղած այս օսմանյան «իշխանի» մասին, իսկ նա, Մազարինին, միտք էր հղացել լուղովիկ XIV-ին առաջարկելու՝ Հայր Օտտոմանին օգտագործել սուլթանի դեմ ծրագրվող պատերազմի մեջ: Եվ, այսպիսով, այդ ժամանակ, երբ մանավանդ Կանդիայի պատերազմն էլ նոր թափ էր ստացել՝ խաչակրական տրամադրությունները բարձրացնելով, Հայր Օտտոմանը Փարիզ էր հասել 1665 թ. հունվարի վերջերին:

Հայր Օտտոմանն օրվա միջազգային «հերոսն» էր: Նա այն անձնավորությունն էր, որին խնամքով փայփայել ու հրապարակ էր քաշել եվրոպական դիվանագիտությունն իր քաղաքական հաշիվների համալուծմանյան գահի շրինավոր տեր ու ժառանգ հայտարարելով Հայր Օտտոմանին՝ եվրոպայի կաթոլիկ պետություններն այժմ ուզում էին նրա միջոցով պետական հարված փորձել Սուլթան Մահմեդ IV-ի իշխանության դեմ և դրանով առնվազն թյուրքերի ուշադրությունը շեղել Կանդիայից:

Այդ իրադրության մեջ, երբ մյուս կողմից նոր խաչակրության ալիքն արդեն որոշ հույսերով սպասվում էր Արևելքում մի օրից մյուսը, հույն-հայկական ազատագրական շարժման ղեկավարների կողմից Հայր Օտտոմանը կարողացել էր համարվել այն անձը, որը պիտի զիջավորեր խաչակրական արշավանքը, իսկ այդ արշավանքին պետք է անպայման մասնակցեին Ռուսաստանի և Վրաստանի թագավորները:

Խաչակրական շարժման համար պատկերացվող այս ծրագիրը, որ հայ ազնվականը Փարիզ էր տարել, ավելի բացահայտ կերպով մենք գտնում ենք պարզաբանված մի քանի նամակների մեջ:

Ալեքսանդրիայի պատրիարքական փոխանորդ Կոզմա Պալեոլոգը, որի անձնավորության վրա մեծ հույսեր էին դրված, քանի որ նա բյուզանդական Պալեոլոգների սերնդից էր համարվում և դրանով էլ ավելի հզոր գեր կարող էր կատարել գործի հաջողության համար, քան հայազգի ազնվականը, նրանից քիչ հետո ուղղակի հարաբերության մեջ էր մտել Հայր Օտտոմանի հետ և հույն-հայկական միացյալ ապստամբության հարցի շուրջը բանակցություններ վարում:

Ահա թե ի՛նչ էր գրում Կոզմա Պալեոլոգը՝ Հայր Օտտոմանին ուղղած իր նամակներից մեկում.

«Արժանավոր Վեհափառություն.

Այն վստահությունը, որ ինձ շնորհել է նորին Վեհափառությունը, ինձ զրդում է ոչ միայն քարոզությամբ նվիրվելու Ձեր ծառայությանը՝ հորդորելու համար ամբողջ Հունաստանը, որպեսզի նա Ձեզ ճանաչի որպես թագավոր, որպես թագավոր և ազատարար, այլև, եթե կկամենաք, անձամբ դեսպանության գալու Մոսկովիայի և Իբերիայի թագավորների մոտ, որոնք իրարու հարեկաններ են, և Ձեզ հայթայթելու այնքան մարդ, որքան Դուք կուզեք: Ես վերջին Պալեոլոգի գերդաստանից եմ և [մենք] երբեք հարկ չենք տվել թյուրքին:

Մուհամմեդիմ անունն են տալիս մեզ՝ Թեսաղոնիկեի վերջին իշխան Մավ-րիկի թոռներին, որոնցից է Թեսաղոնիկեի այժմյան արքեպիսկոպոսը, որ իմ հո-րեղբայրն է. իսկ Եգիպտոսի ծովեզերյա ամբողջ բնակչությունը սիրում է ինձ»<sup>1</sup>։

Այս նամակից երևում է, որ ռուսաց և վրաց թագավորներին խաչակրա-կան արշավանքին մասնակից դարձնելու համար հատուկ դեսպանությամբ դիմում ու հրավեր պետք է արվեր նրանց և դեսպանության պաշտոնն անձամբ պետք է կատարեր Կողմա Պալեոլոգը, որը և սույն նամակով ուղղում էր Հայր Օտտոմանի համաձայնությունն ստանալ այդ մասին։ Հայր Օտտոմանը նրա հետ ունեցած անձնական տեսակցությունների ընթացքում ոչ միայն իր հա-մաձայնությունն է տալիս, այլև նրան մի շարք հանձնարարություններ է անում այդ կապակցությամբ։ Պալեոլոգի կատարած այս բանակցությունները երե-վում են այն նամակից, որ նա գրել է Հայր Օտտոմանին՝ Փարիզից մեկնե-լիս, 1666 թ. նոյեմբերի 25-ին.

«Ուղղափառ Վեհափառություն.

Արդեն լիովին խանդավառված Ձեր Վեհափառության ծառայության մեջ՝ ես Ձեր կողմից գրել եմ մեր պատրիարքին ավելի քան ինչ որ Դուք ինձ հանձ-նարարել էիք, նրան հայտնելով, որ ինքը Ձեր մասին պետք է գրի Մոսկովիայի, Իբերիայի և Եթովպիայի թագավորներին, Վալախիայի և Մոլդավիայի երկու իշխաններին, որպեսզի [վերջիններս] Ձեզ օգնեն ու Ձեզ ընդունեն որպես իրենց թագավորը։ Թույլ տվեք, որ ես գործեմ այնպես, ինչպես հարմար եմ դատում։ Ես այս ուղղությամբ կգրեմ բոլոր պատրիարքներին և Մարսելից Ձեզ կգրեմ, թե ի՛նչ պիտի փնեք։ Քանի ես պատրաստ եմ Ձեր Վեհափառության ծառա-ելու՝ Դուք ուրախ կացեք։ Կահիրե հասնելիս՝ ես կաշխատեմ իմ ամբողջ կա-րողությամբ և, կա՛մ մի կողմից, կա՛մ մյուս կողմից, կանենք այն ամենը, ինչ որ աստված կկամենա»<sup>2</sup>։

Մի ուրիշ անթվական նամակից ևս, որը, հավանաբար, 1667 թ. առաջին ամիսներին և Կահիրեից է գրված, մենք գործերի հետագա ընթացքի հետ միա-սին տեղեկանում ենք, որ դեպի Ռուսաստան և Վրաստան գնալիք դեսպանու-թյան խնդիրն աչքի առաջ էր միշտ Կողմա Պալեոլոգը հետևյալն էր գրում Հայր Օտտոմանին.

«Ստացել եմ Ձեր պատվական [նամակ]ներից մեկը և, ի տես նրան, իմ հոգու մեջ անբացատրելի հաճույք եմ զգացել, իսկ իմ սրտում՝ այն գորովը, որ անկեղծորեն տածում եմ Ձեր Վեհափառության հանդեպ։ Տերը գիտի, որ ես լիովին պատրաստ եմ իմ արյունը թափելու Ձեզ հետ միասին, նախ աստծու փառքի համար և հետո՝ Ձեր Վեհափառության։ Իմ խոսքը կլինի հաստատ և ավելի քան հաստատ։ Դուք գործեցեք և սկսեք տնօրինել իրերը նուրբ խորա-գիտությամբ։ Հավանական է, որ այս ամառ ես Ալեքսանդրիայի, Անտիոքի և Երուսաղեմի երեք պատրիարքների կողմից նամակներ տանեմ Մոսկովիայի և Իբերիայի թագավորներին [և] այդ տեղերից նմանապես [նամակներ] ուղար-կենք Եթովպիայի թագավորին, որպեսզի նա, ըստ այնմ, գրավի Եգիպտոսը»<sup>3</sup>։

Մենք տեսնում ենք, որ հույն-հայկական ապստամբության ծրագրի դաշ-նակիցների մեջ ևս համակրանք էր վայելում Ռուսաստանին դիմելու հարցը։

<sup>1</sup> P. O. Bulgarini. Vita del Padre maestro F. Domenico di S. Tommaso, ecc., p. 286.

<sup>2</sup> Ibidem, p. 287.

<sup>3</sup> Ibidem, p. 288.

Հայ պատվիրակի զրույցից և Կոզմա Պալեոլոգի առաջին նամակից երևում էր, որ Վալախիան և Մուզավիան, որոնք սուլթանին հարկատու երկրներ էին, նույնպես պիտի միանային այդ շարժմանը, և այդ երկու հունադավան երկրները, որոնք հունական եկեղեցու անմիջական ազդեցության ենթակա և առհասարակ հույների հետ քաղաքական ու տնտեսական սերտ կապերով կապված երկրներ էին, այս կապակցությամբ հարաբերությունների մեջ էին Ալեքսանդրիայի պատրիարքության հետ: Այսպես՝ Վալախիայի վոյեվոդի որդի Գրիգոր Վասիլի մի նամակից, որ նա 1666 թ. դեկտեմբերի 8-ին Մարսելից գրել էր Հայր Օտտոմանին, տեղեկանում ենք, որ նա ևս մտադիր էր Կոզմա Պալեոլոգին ընկերանալու՝ Ռուսաստան գնալու համար:

Գրիգոր Վասիլը գրում էր հետևյալը.

«Արքադան Վեհափառություն.

Մենք ևս երկար համբերության գնով եկել ենք այն համոզման, թե Ձեր եղբայր Մահմեդը անարդար է: Այս կողմերն եկել եմ Հռոմ գնալու դիտավորությամբ, բայց Ալեքսանդրիայի Տեղապահը փոխեց իմ մտադրությունը: Այժմ ես ստիպված եմ մի գործով գնալ Բարսելոնա: Պատրիարքից լուրերի եմ սպասելու և հիշյալ Տեղապահի հետ գնալու եմ Մոսկովիա: Ինչ Ձեր ծառան եմ և, եթե մեր տեր Քրիստոսը ինձ թույլատրի, հույս ունեմ, որ մենք կտեսնվենք: Որով համբուրում եմ Ձեր ձեռքերը»<sup>1</sup>:

Այս նամակից նաև երևում է, որ այս միջոցին Ալեքսանդրիայի Պալիսիոս պատրիարքը, որի ներկայացուցիչներն էին Կոզմա Պալեոլոգն ու հայ ազնվականը, ինքն արդեն նախնական բանակցություններ վարելիս էր ցարական արքունիքում, որովհետև նա այդ ժամանակ Նիկոնի խնդրով Մոսկովյումն էր գտնվում<sup>2</sup>: Արդ՝ ծրագրվող դեսպանությունը Պալիսիոս պատրիարքից տեղեկությունների էր սպասում՝ Մոսկվա մեկնելու և առաջադրված կարևոր խնդիրը կատարելու համար:

Պետք է նշել, որ հույները մեծ նշանակություն էին տալիս Ռուսաստանի մասնակցությանը Հունաստանի ազատագրության գործին: Պրավոսլավ Ռուսաստանի միջամտությունը նրանց համար փայփայված երազ էր: Ջ. Սորանցոն, ցարի և սուլթանի հարաբերությունների մասին խոսելիս, 1576 թ. գրում էր, որ հույները, ինչպես բուլղարները, սերբերը և այլն, «միշտ պատրաստ են զենքը ձեռք առնելու և ապստամբվելու՝ թյուրքական ստրկությունից ազատվելու համար, և ենթարկվելու նրա (ռուսական ցարի) իշխանությանը»<sup>3</sup>: Իսկ մեր դեպքերին ժամանակակից Ռայկոտն ասում էր, թե «հույներն առանձին

<sup>1</sup> Ibidem. p. 288.

<sup>2</sup> Պալիսիոսը Անտիոքի պատրիարք Մակարի հետ միասին Փոքր Ասիայով, Պարսկաստանով, Էրաստանով ու Ասորախանի վրայով Մոսկվա էր հասել 1666 թ. նոյեմբերի 12-ին, հին տոմարով՝ նոյեմբերի 2-ին, Н. Костомаров, «Русская история в жизнеописаниях ее главнейших деятелей», отд. II, вып. 4 (С. Петербург, 1874), стр. 202—203.

<sup>3</sup> «Relatione del Clarissimo Signor Giacomo Soranzo K. P. ritornato d'Ambasciatore a sultan Amurat, Imperatore de Turchi, et commissario alli confini della Dalmatia, fatta in senato alli 8 di Novembre 1576» (Միլանի Ամբրոսյան Մատենադարանի ձեռագիր), Տե՛ս նաև՝ «Relatione delle cose di Constantinopoli et disegni del signor Turco per l'anno futuro 1576, fatta al Signor Don Gioan d'Austria da un cavaller di Malta, mandato a questo fine da S. E. a quella Porta et partito da Constantinopoli a di 7 Settembre 1575» (Միլանի Ամբրոսյան Մատենադարանի ձեռագիր):

համարում և սեր ունեն դեպի մոսկովցիները, որոնք, մի քանի հին մարգարեությունների համաձայն, կոչված են այս ժողովուրդը դուրս բերելու այն բռնակալությունից, որի տակ գտնվում է նա»<sup>1</sup>. և այդ մղումով նրանք միշտ գաղտնի հարաբերությունների մեջ էին ռուսական արքունիքի հետ: Այսպես՝ Կ. Պոլսում հունական պատրիարքներ Պարթենիոս II-ը 1651 թ. և Պարթենիոս III-ը 1657 թ. թյուրքերի կողմից որպես դավաճան կախաղան էին հանվել՝ ռուսաց ցարի հետ հարաբերությունների պատճառով<sup>2</sup>: Հակառակ, սակայն, այդ հիմնական ձգտումին, եթե հույները երբեմն իրենց աչքերը դեպի կաթոլիկ եվրոպան էին շուռ տալիս, ինչպես այժմ էր, պատճառն այն էր, որ քաղաքական հանգամանքների բերումով թվում էր, թե այդ կողմից էր ժպտում ազատության աստղը: Այդ հույսը, իհարկե, սնանկ էր: Մյուս կողմից պետք է նաև հիշել, որ լատինական Արևմուտքի ուժն օգտագործելու նպատակը հետապնդող հունական կեղծ լատինասիրությունը ծանոթ էր դեռևս բյուզանդական պայսրության վերջին շրջաններում Պալեոլոգների օրով, երբ թյուրքական ագրեսիան ուժեղ կերպով սպառնում էր պետության գոյությանը:

Հույն ժողովրդի կապերը Ռուսաստանի հետ՝ հիմնված էին քաղաքական փոխադարձ շահերի վրա:

Այստեղ հույն-ռուսական հարաբերությունների հարցին զուգորդվում է հայ-ռուսական հարաբերությունների հարցը: Հույների մոտ շարժումն ու ձեռնարկումներն անջատ չէին, այլ միասնություն էին կազմում հայկականի հետ. Ռուսաստանի մասնակցությունը որոնելու և ապահովելու գործում՝ հայերը հույների անբաժան ուղեկիցներն էին:

Պատահական չէ, որ հենց այս ժամանակը զուգահեռվում է Նոր-Ջուղայի Հայկական առևտրական ընկերության և ռուսական պետության միջև առևտրական հայտնի պայմանագրի կնքմանը (1667 թ.), պայմանագիր, որը, ինչպես իրավամբ նշում է պրոֆ. Վ. Պարսամյանը՝ հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը նվիրված իր հոդվածում, «հաստատուն հիմքերի ու լայն ուղիների վրա դրեց հայ-ռուսական տնտեսական կապերը և ամուլի հող պատրաստեց նրանց քաղաքական կապերի համար»<sup>3</sup>: Ռուսաստանի այս քաղաքականությունը բխում էր նրա դեմ թյուրքական ագրեսիայի և ռազմական էքսպանսիայի զարգացմանը դիմագրավելու անհրաժեշտությունից<sup>4</sup>: Հատկապես թյուրքական էքսպանսիայի ուժեղացման շրջանում, ինչպես պրոֆ. Վ. Պարսամյանն է գրում, «Ռուսաստանի համար առաջնահերթ խնդիր էր դառ-

<sup>1</sup> Chev. Ricaut, Histoire de l'Eglise Grecque et de l'Eglise Armenienne (Amsterdam, chez Jaques Desbordes, 1710) p. 93.

<sup>2</sup> Առաջինի մասին տես՝ J. de Hammer, Histoire de l'Empire Ottoman, t. II, p. 573. Իսկ երկրորդի մասին տես՝ Երեմիա Չելեբի, Օրադրութուն (Երուսաղեմ, 1939), էջ 233—235. և J. de Hammer, Histoire de l'Empire Ottoman, t. III, p. 44.

<sup>3</sup> Վ. Պարսամյան, Հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, «Տեղեկագիր» Հայկական ՍՍՏ Գիտությունների ակադեմիայի, հասարակական գիտություններ, 1952, № 7, էջ 75: Տես նաև «Армяно-русские отношения в XVII веке. Сборник документов; подготовили к печати В. А. Парсамян, В. К. Восканян, С. А. Тер-Авакимова» (Երևան, Изд. Академии наук Арм. ССР, 1953).

<sup>4</sup> XVI—XVII դարերում ռուսական պետության դեմ թյուրքիայի կողմից Արևելյան եվրոպայում, կովկասում և Պարսկաստանում տարված բացահայտ հարձակողական քաղաքականության մասին տես՝ Н. А. Смирнов, Россия и Турция в XVI—XVII вв., т. I (Москва, 1946), стр. 4—6 и т. д.

նում հակաթյուրքական ուժերին համախմբելը և միացյալ ջանքերով թյուրքական ագրեսիայի դեմ պայքարելը: Ռուսաստանի թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական շահերը պահանջում էին, որպեսզի նա սերտ կապ ստեղծի թյուրքական ագրեսիային զոհ դարձած կովկասյան ժողովուրդների, այդ թվում և հայերի հետ»<sup>1</sup>: Հայ ժողովուրդը, տառապելով թյուրքական տիրապետության անտանելի լծի տակ, իհարկե, ինքն էլ չէր կարող անտարբեր լինել դեպի Ռուսաստանի այդ քաղաքականությունը, և թյուրքական բռնակալության դեմ ուղղված իր շարժման մեջ դաշնակցելով արդեն ձևավորված ռուսական օրինատացիա ունեցող հույն ժողովրդի հետ, նա անհրաժեշտ էր գտել ռուսական հզոր պետության մասնակցությունը որոնել իր ազատագրման գործին:

Տեղի ունեցած արդյոք առաջադրված դեսպանությունն ինչպես դեպի Ռուսաստան, այնպես էլ դեպի Վրաստան, Քարթլինա, որի մասնակցությունը նույնպես կարևոր դեր կունենար թյուրքիայի դեմ ծրագրվող այդ ընդհանուր շարժումների մեջ, և որը, իր կարգին, քաղաքական սերտ կապեր ուներ Ռուսաստանի հետ: Դա մեզ հայտնի չէ առայժմ: Մեզ համար կարևոր է դեսպանության խնդրի քաղաքական նշանակությունն այն տեսակետից, որ դա որոշ լույս է սփռում հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների նախնական շրջանի պատմության վրա:

Այժմ գանք հայ պատվիրակի անձնավորության խնդրին:

Ո՞վ էր արդյոք Հ. Բուլգարինիի հիշատակած «հայ ազնվականը», որը հանդես էր գալիս հայ և հույն ժողովուրդների ազատագրության անունով: Հ. Բուլգարինին, ինչպես տեսանք, հայ «ազնվականի» անունը չի տալիս մեզ, բայց այդ հարցի վրա բավականին լույս է սփռում Փարիզի Ազգային Մատենադարանում գտնվող մի վավերագիր, որը Կոզմա Պալեոլոգի կողմից Կոլրերին ուղղված նամակ է (25 նոյ. 1666 թ.)<sup>2</sup>: Դրա վրա առաջին անգամ ուշադրություն է հրավիրել Հ. Միսաքը, նշելով, որ ըստ այդ վավերագրի, Կոզմա Պալեոլոգը 1666 թ. նոյեմբերին գտնվել է Փարիզում «Chazi Murat անուն մի հայի հետ, որը, իրոք, կարող է լինել Բուլգարինիի վերև հիշատակածը»<sup>3</sup>:

Մենք հետազայում ձեռք բերելով այդ նամակի պատճենը՝ գտանք, որ դա գրված էր իտալերեն լեզվով, որը ժամանակի վաճառականության և դիվանագիտության լեզուն էր: Ուստի, հայ ազնվականի անունը գրված լինելով իտալական ուղղագրությամբ, պետք էր կարդալ Խաձի Մուրատ, այսինքն՝ Հաջի Մուրատ<sup>4</sup>: Արաբերեն հաջի (حاج) պատվավոր մակդրի փոխարեն հայերի մոտ ծրուսաղեմ ուխտի գնացած մարդկանց համար ավելի էր ընդհանրացած նույն իմաստով գործածել մուլտեսի, մղտեսի կամ մահտեսի, որը նույնպես արաբերենից էր գալիս (مهاجر): Այսպիսով, 1666 թ. Փարիզ գնացող «հայ ազնվականը» կոչվում էր Հաջի Մուրատ կամ Մահտեսի Մուրատ:

<sup>1</sup> Վ. Պարսամյան, հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, էջ 69:

<sup>2</sup> Bibliotheque Nationale, Melanges Colbert, vol. 142, fol. 175.

<sup>3</sup> *Revue d'Histoire Diplomatique*, XVII, p. 372. Մաթորեզը միանում է Միսաքի կարծիքին՝ Բուլգարինիի հիշատակած հայազգի ազնվականի և Chazi Murat-ի նույնության մասին. J. Mathorez, *Notules sur quelques Armeniens ayant vécu en France avant 1789, Revue des Etudes Armeniennes*, t. II, 1922, p. 34.

<sup>4</sup> Տառագարձության օրենքով լատ. ch=հուն. γ, որ է խ: Թյուրքիայի հույները թյուրքերեն լեզուն խոսելու իրենց յուրահատուկ արտասանությունն ունեն. նրանք հ հնչյունն արտաբերում են խ, իսկ զ հնչյունը՝ ձ:

Նրա մասին Կողմա Պալեոլոգն իր հիշյալ նամակում ասում է, թե նա «ամբողջ Թյուրքիայում հանրածանոթ մարդ է. Կանեայում նա ազատել է ֆրանսիացի բազմաթիվ գերիներ և սուլթանը նույնպես ճանաչում է նրան»։ Ուրեմն աննշան մարդ չէր նա։ Իսկ իր՝ Մահմեդի Մուրատի 1683 թվականը կրող մի ինքնագիր հիշատակարանից՝, որի մասին կխոսենք հետագայում, տեղեկանում ենք, որ նա բաղիշեցի էր և կոչվում էր նաև Մահմեդի Շահմուրատ։

Նրա սոցիալական դեմքը պարզելու համար մեզ օգնում է վերահիշյալ նամակի բովանդակությունը, որը պատվիրականների անհատական գործերին է վերաբերում։

Նամակագիրը Կուրերին հայտնում է, որ իրենք կողոպտվել են ֆրանսիական կորսարներից, և օժանդակություն է խնդրում։

Այս ժամանակ Կանգիայի պատերազմի հետևանքով եվրոպական կորսարները մեծ գործունեություն էին սկսել։ Նրանց մեջ հետին տեղը չէին բռնում ֆրանսիացիները։ Արդ՝ ֆրանսիական կորսարների հետ խնդիր ունեին հիշված պատվիրակները։ Ավագ կորսար Կրիվիլյեն կողոպտել էր Մահմեդի Մուրատին և Պալեոլոգի սպասավոր Նիկոլային. իսկ կորսար ասպետ Պոլլին՝ Պալեոլոգի հոր մի նավն էր գրավել։ Եվ այժմ սրանք իրենց իրավունքները ետ էին պահանջում, անշուշտ այն հիման վրա, որ իրենք թշնամի ազգության չէին պատկանում։

Այս պարագան ցույց է տալիս, որ Մահմեդի Մուրատը վաճառական էր, և ոչ-փոքր վաճառական։ Նա մեկն էր այս շրջանի բաղիշեցի այն անվանի վաճառականներից, որոնք լայն երթևեկություն ունեին միջազգային առևտրի ճանապարհների վրա և այդ ճանապարհների վրա կողոպտվել էր կորսարներից։

Մենք գեո կոտեսենք նաև, որ նա Հայաստանի խոջա — «իշխան»-ների պատղամավորն էր։

Այսպիսով, ուրեմն, հայ պատվիրակ Մահմեդի Մուրատը մեզ ներկայանում է որպես արևմտահայ առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչներից մեկը, որը դիվանագիտական աշխարհի առաջ հանդես էր գալիս արևմտահայերի ազատագրման անունից, թյուրքական բռնակալ տիրապետության դեմ հայկական զինված ապստամբության ծրագրով։ Նա 1666 թվականին, որպես պատվիրակ, Փարիզում դիմում էր Հայր Օտտոմանին, նրան խրախուսելու համար «Արևելյան Կայսրությունը վերականգնելու գործում», վստահեցնելով, որ Օսմանյան Կայսրության հույներն ու հայերը, եթե նրանց օգնություն ցույց տրվի, «կթոթափեն օսմանյան լուծը և թագավոր կհռչակեն նրան» (Հայր Օտտոմանին)։

«Արևելյան Կայսրությունը վերականգնելու գործը», ինչպես երևում է Բուլղարիայի վերահիշյալ հատվածից, հույն-հայկական ծրագրում պատկերանում էր երկու հենարանների վրա — ներսից՝ հույն և հայ ժողովուրդների ապստամբությամբ և դրսից՝ զինված ուժերի հարձակմամբ, այսինքն՝ զինված ապստամբությունն ու խաչակրությունը պատկերացվում էին որպես միավորվող՝ միասնական մի շարժում, որը, Հայր Օտտոմանի զլխավորությամբ ու

<sup>1</sup> И. А. Орбели, Описание Версаля в армянской записи 1683 года, «Известия» Российской Академии истории материальной культуры, т. I, № 33, 8 февраля 1921 г., стр. 391—399.

ղեկավարութեամբ, պետք է տապալեր Օսմանյան Կայսրութիւնը և նրա ավերակների վրա վերականգնէր նախկին Արևելյան Կայսրութիւնը:

Փարիզի վեներտիկյան դեսպան Մարկ-Անտոն Զուստինիանին գործնականութիւն է մտցնում այդ ծրագրի մեջ, ըստ օրվա քաղաքական պահանջի:

Հայ պատվիրակի և Հայր Օտտոմանի առաջին բանակցութիւնների մասին խոսելիս՝ Բուլգարինին ասում է, որ «հայի զրույցը կարող էր այնքան մեծ տպավորութիւն չգործել Հայր Օտտոմանի նուրբ դատողութեան վրա, հաշվի առնելով, որ նման մատուցումներ խոսքի սահմանից չեն անցնում», սակայն նրա ներկայացրած խիստ ազդեցիկ նամակները և գործի հաջողութեան համար հայտնվող բուռն ցանկութիւնը, որն արտահայտվում էր մինչև իսկ արյուն թափելու և կյանք զոհելու պատրաստակամութեամբ, Հայր Օտտոմանին այնքան լավ հույսեր են ներշնչում, որ նա խնդիրը հայտնում է վեներտիկյան դեսպան Մարկ-Անտոն Զուստինիանին, իսկ վերջինս նրան հորդորում է «շարունակել բանակցութիւններն ամենայն արագութեամբ»<sup>1</sup>։ Վեներտիկյան դեսպանը կոնկրետ հնարավորութիւնների հիման վրա զարգացնում է արևելցիների ծրագիրը՝ այդ կապելով Կանգիայի պատերազմի հետ։ Այս ուղղութեամբ նա բանակցելով իր կառավարութեան և Հռոմի հետ՝ առաջարկում է Հայր Օտտոմանին դնել նավատորմի վրա «փոփոխիչ հարված փորձելու համար Արևելքում՝ հօգուտ Կանգիայի և ամբողջ քրիստոնեութեան»<sup>2</sup>։

Քիչ հետո այս ծրագիրը Հռոմում ստանում է վերջնական ձև։ Նրա մասին բավականին մանրամասնորեն խոսում է Հռոմի վեներտիկյան դեսպան Անտոն Գրիմանին՝ Վեներտիկի Սենատին ուղղած իր մի նամակում (14 ապր. 1668 թ.)<sup>3</sup>։

Մենք այստեղ չենք խոսի այն մասին, թե ինչպիսի՜ անփառունակ վախճան ունեցան Հայր Օտտոմանի ձեռնարկումները Կանգիայում և դրանով էլ տապալվեցին նաև նրա բոլոր հետագա ծրագրերը:

Մեզ հայտնի չէ նաև, թե ի՞նչ եղավ արևելյան պատվիրակների կապը նրա հետ։ Այդ կապի մասին մեր ունեցած վերջին տեղեկութիւնները հասնում են միայն մինչև հիշյալ դեպքերի նախօրյակը։ Գրիմանիի այն հաղորդումը, թե Հայր Օտտոմանը «հարաբերութիւններ ունի մի քանի հունական պատրիարքների հետ», ցույց է տալիս, որ հունական ներկայացուցիչ Կոզմա Պալեոլոգն իր կապերը պահում էր նրա հետ։ Հայոց պատվիրակ Մահտեսի Մուրատի մասին ունենք ավելի բացահայտ տեղեկութիւններ։ Հայր Օտտոմանը, Հռոմից մեկնելուց առաջ, ստացել էր Փարիզի վեներտիկյան դեսպան Մարկ-Անտոն Զուստինիանիի մի նամակը (10 մայ. 1668 թ.), որի մեջ նա հայտնում էր, թե «հայազգի իշխանը (seigneur arménien) շարունակում է խոսել ու գրել, բայց դեռ չեն երևում նրա գործունեության արդյունքները»։ Իսկ նամակի վերջում ասում էր. «Զերդ Բարձրության ուղարկում եմ հայ իշխանի մի նամակը»<sup>4</sup>։

Սա է այս շրջանում միակ տեղեկութիւնը Մահտեսի Շահմուրատի գործունեության մասին:

<sup>1</sup> P. O. Bulgarini, Vita del Padre maestro F. Domenico di S. Tommaso, ecc., p. 285.

<sup>2</sup> P. A. Guglielmotti, Storia della marina pontificia, vol. III (Roma, Tip. Vaticana, 1893), p. 294.

<sup>3</sup> Revue d'Histoire Diplomatique, XVII, p. 372—373.

<sup>4</sup> Ibidem, p. 374—375.

Քիչ հետո, 1669 թ. սեպտեմբերի 6-ին, տեղի ունեցավ Կանդիայի անկումը, վերջ դնելով նաև Արևելքում հայր-օտտոմանյան ծրագրերի հետ կապված հույսերին: Եվ Կանդիայի անկումով ու պատերազմի հաշվհարդարով փակվեց XVII դարի արևմտահայ ազատագրական շարժումների այս շրջանը<sup>1</sup>, որը հայ-հունական եղբայրակցության և թյուրք նվաճողների դեմ համատեղ և միասնական պայքարի համար ծավալված գործունեության մի էջ է հանդիսանում:

Հայաստանի և Հունաստանի ազատագրության համար ձեռնարկված այս շարժումը չկարողացավ դուրս գալ դիվանագիտության շրջանակներից ու հասնել գործնական արդյունքի:

Հայր-օտտոմանյան ծրագրերով եվրոպացիների կողմից հայերին և հույներին տրվելիք «ազատությունը» քաղաքական անկախության իմաստ չունեի: Դա երևում է Անտոն Գրիմանիի 14 ապրիլի 1668 թ. վերոհիշյալ նամակից, որը խտացումն է Հայր Օտտոմանի ծրագրերի. ըստ որում՝ «հույներին, քրիստոնյաներին և լավ թյուրքերին» զենք տալ, որպեսզի նրանք «աջակցեն իր գահակալմանը»: Ինչ որ նշանակում էր, թե օսմանյան կայսերական գահի վրա փոխանակ մահմեդական սուլթանի, պիտի նստեր մի քրիստոնյա՝ կաթոլիկ սուլթան: Դա իրականության մեջ որևէ փոփոխություն չէր բերի Արևելքի քրիստոնյա ժողովուրդներին ո՛չ ըստ ձևի, ո՛չ էլ ըստ բովանդակության: Ըստ ձևի, որովհետև օտար տիրապետության լուծը կշարունակեր ճնշել այդ ժողովուրդների վզին, նրանց չէր տրվի ո՛չ սեփական իշխանություն, ո՛չ սեփական տերիտորիա. ըստ բովանդակության, որովհետև այդ ժողովուրդները կպահվեին ռայայի այն միևնույն դիրքում, որի մեջ նրանց դրել էր մահմեդական իրավակարգը: Հայր Օտտոմանի ծրագիրը գործերի հաջողության համար անհրաժեշտ էր գրտնում «ազգաբնակչությունների հետ վերաբերվել ճարպիկ ձևով» և, իհարկե, նրանից հետո հրապարակ կգար կաթոլիկական իրավակարգի ամբողջ խստությունը՝ ոչնչով չտարբերվելով մահմեդական մոլեռանդությունից: Հիշյալ ծրագիրն արդեն նախատեսում էր, որ «նրանցից շատերը կորոշեն ընդգրկել կաթոլիկական հավատը»: Բսկ թե ինչպե՛ս կամ ի՛նչ միջոցառումների շնորհիվ նրանք «կորոշեն» այդ բանը՝ հասկանալի է կաթոլիկական մոլեռանդության գործելակերպին ծանոթ ամեն մի մարդու: Այդ միջոցների կիրառման մասին գաղափար կազմելու համար բավական է կարդալ միայն Միք. Ֆեբուրի 1675 թ. լույս տեսած «Թյուրքիայի ներկա կացությունը» անուն գիրքը, որտեղ մանրամասնորեն առաջ էին բերվում «ազատագրվելիք» ժողովուրդների կրոնական ազդեցիկ ինքնուրույնությունները ջնջելու սահմանված միջոցառումները, որոնց թվում անամոթաբար խոսվում էր մինչև իսկ «բռնի ուժով» նրանց զրկելու մասին նրանց սեփական եկեղեցիներից և «խսյոփվ արգելելու»՝ հայերեն և մյուս տեղական լեզուների ուսուցումը դպրոցներում և այլն<sup>2</sup>:

<sup>1</sup> Կրետեի պատերազմից հետո արևմտահայ ազատագրական շարժման համար սկսվում է մի նոր շրջան, որը տևում է նույն դարի զրեթե մինչև 80-ական թվականների կեսը: Այս երկրորդ շրջանում, հույներից բացի, հայերի հետ կողք-կողքի հրապարակ են գալիս նաև թյուրքական տիրապետությունից ղժղոհ ասորիները և վրացական ժողովուրդները (իմերեթացիները, զուլբիացիները և մինգրելները): Նոր փաստաթղթերի համաձայն Մահ-տեսի Մուրատը այս շրջանում ևս բեմի վրա է՝ որպես հայոց պատվիրակ: Բայց դա առանձին ուսումնասիրության նյութ է:

<sup>2</sup> Michel Febvre, L'Etat présent de la Turquie (Paris, 1675), p. 278—282.

Այսպես էր հասկանում կաթոլիկ Եվրոպայի արևելյան քրիստոնյա ժողովուրդների «ազատագրությունը»:

Բայց մյուս կողմից, եթե նույնիսկ Կանգիայի դիվերսիան հաջողվեր, դժվար էր իրագործված տեսնել Հայր Օտտոմանի ծրագրի այն մասը, որը վերաբերում էր Օսմանյան Կայսրության ճակատագրին: Ճիշտ է, որ երեք դաշնակիցները եռանդով էին կոչվում Կանգիայում, բայց, միաժամանակ խորունկ տարաձայնությունների հետ փոխադարձ անվստահություն էր տիրում նրանց միջև: Պատերազմի վերջին շրջանում թյուրքերի հետ սեպարատ հաշտություն կնքելու կողմնակիցներն ուժեղացել էին վենետիկյան սենատում: Անվստահություն էր տիրում նաև Փարիզի և Վատիկանի միջև: Եվ ուշագրավն այն էր, որ այդ բոլոր թյուրիմացությունների հետ կապված էր նաև Հայր Օտտոմանի անունը: Փարիզի պապական նվիրակ Բարչելլինին Վատիկանի արտաքին գործերի մինիստր կարդինալ Ռոսպիլիոզիին գրած նամակում (5 հուլ. 1669 թ.) տեղեկացնում էր, որ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Դը Լիոնը գանգատ էր հայտնել այն մասին, թե պապը և Վենետիկի Սենատը «լուրջ գործերի մասին են բանակցում մեծ վեզիրի հետ անձամբ՝ Հայր Օտտոմանի վերաբերմամբ», և տհաճություն էր հայտնել, որ «վստահություն չեն ունեցել այդ մասին Ֆրանսիային իրազեկ դարձնելու»:

Խնդիրն այն չէր, թե ի՞նչքան էին հիմնավորված Լուդովիկ XIV-ի կասկածանքները Վատիկանի և Վենետիկյան սենատի նկատմամբ, այլ այն է, թե կանդիական պատերազմի վերջին օրերին դաշնակիցների հարաբերությունները պղտորված էին հենց Հայր Օտտոմանի կապակցությամբ: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ Լուդովիկ XIV-ի «կասկածանքներն» իր դաշնակիցների հանդեպ ուրիշ բան չէին, եթե ոչ պատերազմի մոտալուտ վախճանի հետ կապված մտահոգությունների արտահայտություններ, իր սեփական շահերն ապայման ապահովելու միջոցառումներ: Լուդովիկ XIV-ն այժմ «կասկածանքներ» հարուցելով՝ հետագայի համար պատրվակների հող էր պատրաստում, որպեսզի հաղթությունից հետո կարողանար ի նպաստ իրեն տնօրինել հաղթանակի արդյունքները, Բյուզանդիոնի կայսերական գահի վրա բազմեցնելու համար Բուրբոնյան մի իշխանի, փոխանակ Հայր Օտտոմանի. իսկ հաշտության դեպքում՝ նա ուզում էր հեղինակավոր ձայն ունենալ բանակցությունների մեջ, որպեսզի Վենետիկը, առիթից օգտվելով, ֆրանսիական վաճառականության դիրքերը չխախտեր Թյուրքիայում:

Կար և ուսական հարցը: Ռուսաստանի մասնակցության արդյունքն ինքնին դիվանագիտական խոչընդոտներից մեկը պետք է լիներ հայր-օտտոմանյան ծրագրերի իրագործման: Ռուսական պետությունն այս շրջանում իր հզորացման և վերելքի շրջանն էր ապրում, արդեն նշանակալից կշիռ էր ձեռք բերել Եվրոպայում և միջազգային հարաբերությունների մեջ, այնպես որ թյուրքերի դեմ կազմակերպվող զինակցությունների դեպքերում Ռուսաստանին մասնակից դարձնելու գաղափարը բավականին տարածված գաղափար էր Եվրոպայում, և այդ պատճառով էլ զարմանալի չէ, որ այդ մասին բերվող հույն-հայկական առաջարկը Հայր Օտտոմանի կողմից համարվել էր խրախուսելի: Բայց դրանով էլ կստեղծվեր մի նոր նախադրյալ հետագա վեճերի, քանի որ խնդիրը Կ. Պոլսի գրավմանն էր վերաբերում, որովհետև այդ հարցում ֆրանսիական և ռուսական պետությունների շահերը բխվում էին, իսկ շահերի այս հակադրությունը նույնպես կդառնար մեկն այն լուրջ խոչընդոտներից, որոնք, ինչ-

պես ասացինք, թույլ չէին տա Հայր Օտտոմանի ծրագրի իրագործումը՝ բյուզանդական գահի վերականգնման հարցում:

Այս տեսակետներից՝ Հայաստանի և Հունաստանի համար, նրանց ազատագրական պայքարի պատմության մեջ տեղի ունեցած XVII դարի այս իրադարձությունները, իհարկե, մի փորձաքար էին, որոնք ցույց տվեցին, թե որքան անիմաստ էր հույսեր դնել հեռավոր Արևմուտքի «քրիստոնյա» պետությունների վրա: Այդ փորձից ելնելով հայ և հույն ժողովուրդները հետագայում իրենց ազատագրման հույսերն առանձնապես կապեցին մերձավոր հարևանի՝ ռուսական հզոր պետության հետ, և մենք գիտենք, որ նրանք չսխալվեցին:

Բայց XVII դարում տեղի ունեցած հայ-հունական ազատագրական շարժման այս փաստը, այնուամենայնիվ, կմնա որպես մի նշանակալի էջ երկու ժողովուրդների ազատագրական շարժման պատմության մեջ. այդ ցույց է տալիս, որ բյուզանդիայի անկումից ընդամենը 200 տարի հետո հույն և հայ ժողովուրդների մոտ արդեն հասունացել էր այն գիտակցությունը, թե տիրապետողների ներքին քաղաքականության որոշիչ գծերից մեկը գնում էր երկու նվաճված ժողովուրդներին իրարու թշնամացնելու, նրանց պառակտելու կործանարար ուղիով, մի քաղաքականություն, որի հիմքը դրել էր նույն ինքն Սուլթան Մահմեդ II-ը՝ Բյուզանդիոնի նվաճողը:

XVII դարի հայ-հունական ազատագրական շարժումը՝ նվաճողների այդ քաղաքականության դեմ կազմակերպված միասնական պայքարի առաջին արտահայտությունն էր:

<sup>1</sup> Այստեղ բավական է միայն ասել, որ թյուրքական այդ քաղաքականության աչքի ընկնող երևույթներից մեկն էր Կ. Պոլսի հայկական պատրիարքության հաստատումը 1461 թվականին՝ հունաց, այսպես կոչված, ֆիեզեբուկան պատրիարքության հավասար պատվով և իրավասություններով, չտուեալ նմա իշխանութիւն տիրելոյ ի վերայ Հայոց եղելոց ի Յունաստան ե յԱնատոլիա», տե՛ս Մ. Չամչյան, «Պատմութիւն հայոց», հտ. Գ (Վենետիկ, 1786), էջ 500: Հայ կղերական պատմաբանների կուրությունն այնտեղ էր հասնում, որ նրանք Կ. Պոլսի պատրիարքության հաստատումը համարել են արդյունք այն բանի, որ արյունարբու Սուլթան Մահմեդ II-ը չղութ ունէր ի վերայ ազգին հայոց, անդ: